ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

<< 12 >> նոյեմբերի 2013թվականի N 130 -Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ԹՎՈՎ 24 (ՔՍԱՆՉՈՐՍ) ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶՆԵՐԻՆ ԵՎ ԹՎՈՎ 14 (ՏԱՍՆՉՈՐՍ) ՍՊՈՐՏԴՊՐՈՑՆԵՐԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ելնելով Գյումրիի համայնքային ենթակայության թվով 24 (քսանչորս) մանկապարտեզներում և թվով 14 (տասնչորս) սպորտդպրոցներում ընթացիկ վերանորոգումներ իրականացնելու անհրաժեշտությունից և ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ի մասի 5-րդ կետով՝ **համայնքի ավագանին որոշում է.**

1. Գյումրի համայնքի 2013 թվականի բյուջեով նախատեսված 9/6/1 գործառական 4263 տնտեսագիտական դասակարգման հոդվածից՝ 4.8 (չորս ամբողջ ութ) միլիոն Հայաստանի Հանրապետության դրամը տրամադրել Գյումրիի համայնքային ենթակայության տակ գտնվող թվով 24 (քսանչորս) նախակրթարաններին՝ նվիրատվության կարգով, յուրաքանչյուրին երկու հարյուր հազարական դրամ, շենքերի ընթացիկ վերանորոգման նպատակով (ըստ ներկայացված ծրագրի):
2. Գյումրի համայնքի 2013 թվականի բյուջեով նախատեսված 8/1/1 գործառական 4263 տնտեսագիտական դասակարգման հոդվածից՝ 3.5 (երեք ամբողջ հինգ) միլիոն Հայաստանի Հանրապետության դրամը տրամադրել Գյումրիի համայնքային ենթակայության տակ գտնվող թվով 14 (տասնչորս) սպորտդպրոցներին՝ նվիրատվության կարգով, շենքերի ընթացիկ վերանորոգման նպատակով (ըստ ներկայացված ծրագրի):
3. Հանձնարարել ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ Լենա Ջիլավյանին կատարելու հատկացումները:

Կողմ (20) **Դեմ (0)** **Ձեռնպահ (0)**

Ա.Ադամյան_____

Գ.Ադամյան_____

Ա.Բաղեյան _____

Ա.Բաղրամյան_____

Լ.Բարսեղյան_____

Մ.Գաբոյան_____

Ա.Գրիգորյան _____

Վ.Եղիգարյան _____

Գ.Թաթարյան_____

Հ.Խաչատրյան _____

Հ.Կարապետյան_____

Տ.Հովհաննիսյան_____

Վ.Հունանյան_____

Ն.Մեսրոպյան_____

Ռ.Մխիթարյան_____

Է.Մկրտչյան _____

Վ.Շիրինյան _____

Ե. Պողոսյան _____

Մ.Սահակյան _____

Ա.Վարդանյան _____

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ԲԱԼԱՍԱՆՅԱՆ

2013թ. նոյեմբերի 12

ք.Գյումրի